ՊՐՊՏՈՂ ԻՐԱՎԱԳԵՏԸ

Կյանքի վաթսուն տարին բոլորեց մշտապես պրպտող գիտնականը՝ իրավաբանական գիտությունների դոկտոր Արմենակ Զիլֆուգարի Բեգիյանը։

Արմենակ Բեգիյանը ծնվել է Նախիջևանի ԻՍՍՀ Պարագա գյուղում, 1916 թ. Նրա ծնողները տեղափոխվում են Բաքու, ուր նա ստանում է նախնական կրթություն և միաժամանակ բանվորություն անում։ Այստեղ 18-ամյա Ա. Բեգիյանը ընդունվում է կուսակցության շարքերը և այդ պահից սկսվում է կուսակցության գինվորի կյանքի նոր շրջանը։ 1930 թ. Անդր. ԼԿԵՄ ԿԿ-ն նրան ուղարկում է Լենային Ղարաբաղ՝ իբրև կոմերիտմիության կոմիտեի բաժնի վարիչ։ 1931—33 թթ. նա սովորում է Մոսկվայի Սովետական շինարարության և իրավունքի ինստիտուտում։ Դեռևս ուսումը չավարտած 1933 թ. կուսակցության Կենտրոնական կոմիտեն նրան ուղարկում է Սարատովի մարզի Նոշկինսկիի ՄՏԿ-ի քաղաքային որպես պետի օգնական՝ կոմերիտական աշխատանքների գծով։ Տեղի բազմատիրաժում նա հանդես է գալիս գյուղական սովետների գործունեությունը բարելավելու մասին հոդվածներով։ Աշխատանքը զուգակցելով ուսման հետ, Ա. Բեգիյանը 1934 թ. էքստերն կարգով ավարտում է նշված ինստիտուտը։

Սարատովի մարզկոմը 1935 թ. Ա. Բեգիյանին ուղարկում է Մոսկվա Սովետական շինարարության և իրավունքի կարմիր պրոֆեսորական ինստիտուտ սովորելու, որտեղ ուսման հետ միասին նա նաև զբաղվում է նաև գիտական աշխատանքներ։ Ինստիտուտն ավարտելուց հետո Ա. Զ. Բեգիյանը գործուղվում է Մերձվոլգյան գերմանացիների ԻԿՍՀ, ուր ընտրվում է այդ հանրապետության ԿԳԿ նախագահության քարտուղար։ Ա. Բեգիյանը ակտիվորեն թղթակցում է «Հնդկաստան» կուսակցական լուսավորության հանրապետական ամսագրին, հանդես է գալիս գիտական հոդվածներով՝ նվիրված սովետական պետական իրավունքի և պետության տեսությանը։

1941 թ. Արմենակ Բեգիյանը, կամավոր, մեկնում է ռազմաճակատ և բանակի շարքերում ծառայում մինչև Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը։ Մարտական ծառայությունների համար պարգևատրվում է Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշաններով և մի շարք մեդալներով։ 1946 թ. վերադառնալով Հայաստան, Ա. Զ. Բեգիյանը դասախոսում է ռուսական մանկավարժական ինստիտուտում, իսկ այնուհետև՝ Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի ինստիտուտի Երևանյան մասնաճյուղում։ Այս տարիներին էլ գրում և 1948 թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Ժողովրդական հանրապետությունը նոր տիպի պետություն է» թեմայով։

Ա. Զ. Բեգիյանը արտասահմանյան սոցիալիստական երկրների պետական կառուցվածքի, պետության տեսության, սովետական պետական իրավունքի, հայկական սովետական պետականության պատմության վերաբերյալ 70 գիտական աշխատանքների՝ մենագրություններին, խոշոր հրատարակումների, գրքույկների և հոդվածների հեղինակ է։ Իբրև գիտնական նա ճանաչված է ոչ միայն Հայաստանում, այլ հանրապետության սահմաններից դուրս։ Ա. Զ. Բեգիյանը ՍՍՀՄ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքի «Պետության զարգացման օրինաչափության, կառավարման և իրավունքի» գիտական խորհրդի անդամ է։

Ա. Զ. Բեգիյանի աշխատությունները նշանակալից են հատկապես սովետական ազգային պետականության տեսության և պատմության պրոբլեմների մշակման բնագավառում։

Սովետական ազգային պետականության և շինարարության պրակտիկայի կենսական հարցերին նվիրված նրա աշխատություններում խորը կերպով վեր են լուսավում ազգային պետականության էությունն ու ձևերը, սովետական պետական շինարարության մեջ անտեսական և ազգային մոմենտները, սոցիալականի և ազգայինի հարաբերակցության դիալեկտիկան։

Հայաստանի սովետական պետականության պատմությանը նվիրված Ա. Զ. Բեգիյանի աշխատությունները, հատկապես «Հայկական Սովետական սոցիալիստական հանրապետության ծաղումն ու զարգացումը» մենագրությունը այն գոկտորական դիսերտացիայի հիմքը հանդիսացան, որը նա փայլուն կերպով պաշտպանեց 1964 թ.՝ Մոսկվայում։

Ա. Զ. Բեգիյանի գիտական ստեղծագործության մեջ կարևոր իրադարձություն է «Սովետական Հայաստանի պետության և իրավունքի պատմության» պատրաստվող երկհատորյակի ստեղծումը։ Լինելով ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետության և իրավունքի բաժնի վարիչ և այդ երկհատորյակի խմբագրական կոլեգիայի անդամ, Ա. Զ. Բեգիյանը կարողացել է համախմբել և կոորդինացնել հեղինակային մեծ կոլեկտիվի ուժերը։ Նա երկհատորյակի մի շարք գլուխների և բաժինների հեղինակ է։

Ա. Զ. Բեգիյանն իր աշխատություններով Սովետական Հայաստանի պետության և իրավունքի պատմության գիտության մեջ ծանրակշիռ ներդրում է կատարել։ Դրանցից շատերը, ռուսերեն լեզվով հրատարակելու շնորհիվ, դարձել են ՍՍՀՄ և արտասահմանյան սոցիալիստական երկրների ժողովուրդների սեփականությունը։

Շնորհավորելով 60-ամյակի առթիվ, ցանկանանք Ա. Զ. Բեգիյանին քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր աշխատանք հայրենի իրավագիտության հարստացման գործում։

Կ. Ա. ԼԱԼԱՅԱՆ